Մանկական թատերական խմբերին է ներկայացվում Հովհաննես Թումանյանի ,,Ծիտը,, հեքիաթի երաժշտական ձևավորումը:

Հեքիաթի աշխարհին հարազատ մնալու համար օգտագործվել է զուտ ժողովրդական երգեր ու նվագներ:

Բեմադրող երաժիշտին խորհուրդ է տրվում երգերը դաշնամուրով չընվագակցել, բացի բերված նոտային օրինակներից, որտեղ դաշնամուրը նըվագում է սազի ռճով:

Ժողովրդական մեղեդին պահանջում է նվագակցության գերագույն պարզություն, ինչը որ ամենադժվարն է: Եթե, այնուամենայնիվ, նվագակցվի, ապա հարկավոր է խուսափել եվրոպական ներդաշնակության օրենքներից, մաժոր, մինոր եռահնչյուններից, սեպտակորդներից և օգտագործել առանձին հնչյուններ ու կվարտ-կվինտային համահնչյուններ:

# ՑԱՆԿ

## 1-ին մաս

1. Պարեղանակ / իբրև նախաբան/ ---------------------- շվի
2. ,,Ծընգըլը-մընգըլը,, ---------------------------- ծիտ
3. ,,Գարունն եկավ,, ------------------------------- պառավ
4. ,,...դես թռչեմ, դեն թռչեմ,, -------------------- ծիտ
5. ,,Ծընգըլը-մընգըլը,, ---------------------------- ծիտ

## 2-րդ մաս

6. ,,Հովվի կանչ,, -------------------------------- շվի
7. ,,Ես մի պուճուր հոտաղ եմ,, --------------------- հովիվ
8. ,,Հովվի անկողինը,, ----------------------------- խումբ և հովիվ
9. ,, ... դես թռչեմ, դեն թռչեմ,, ----------------- ծիտ
10. ,,Ծընգըլը-մընգըլը,,---------------------------- ծիտ

## 3-րդ մաս

11. ,,Կալոսի պոկեն,,-------------------------------- զուռնա կամ շվի
12. ,,Փափուռի,, ----------------------------------- խումբ
13. ,,Արև, արև, արի դուս,, ------------------------- խումբ և ծիտ
14. ,,Թագվորի մեր,, -------------------------------- խումբ
15. ,, ...դես թռչեմ, դեն թռչեմ,, ------------------ ծիտ
16. ,, Ծընգըլը - մընգըլը,, ------------------------- ծիտ

## 4-րդ մաս

17. ,,Աշուղի նվագը,, ------------------------------- դաշնամուր/սազի ոճով/
18. ,,Աշուղի երգը,, -------------------------------- աշուղ/դաշնամուրի նվագակցությամբ` /սազի ոճով/
19. ,, ... դես թռչեմ, դեն թռչեմ,, ----------------- ծիտ
20. ,, Ծընգըլը-մընգըլը,, --------------------------- ծիտ /դաշնամուրի նվագակցությամբ` սազի ոճով/

## պարեղանակ

աշխույժ

շվի



Լինում է, չի լինում մի ծիտ:

## ,,Ծընգըլը-մընգըլը,,

ծիտ




Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թոնիր վառի, հաց թխի: Ասում է.

- Նանի ջան, նանի, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թոնիրը վառում:

/ հաց է թխում ու երգում /

,,Գարունն եկավ,,




Գարունն եկավ ամպերով,
Ամպերն եկան անձրևով:

Անձրևը արտին տըվի,
Արտը ինձ ցորեն տըվեց:

Ցորենը ջաղցին տըվի,
Ջաղացն ինձ ալյուր տըվեց:

Ալյուրը տաշտին տըվի,
Տաշտը ինձ խըմոր տըվեց:

Խըմորը իմ թոնրին տամ,
Թոնիրըս ինձ հաց կը տա:

Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:

Ծիտը գնում է, ետ գալի, թե՝ փուշը ետ տուր ինձ:

Պառավն ասում է.

- Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թե՝

- Իմ փուշը տուր,



Պառավը մի լոշ է տալի: Ծիտը լոշն առնում է թռչում:

Ծիտ



## 2-րդ մաս

/,,Հովվի կանչ,,-ը պատկերում է բնությունն ու հովվական կյանքը /

Շվի

արագ






Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում:

Հովիվ

աշխույժ




Ես մի պուճուր հոտաղ եմ,
Հե՜յ, ջանեջան, հե՜յ, ջանեջան, հոտաղ եմ,

Գառըս առնեմ սար ելնեմ,
Հե՜յ, ջանեջան, հե՜յ, ջանեջան, սար ելնեմ:

Մեր սարերին մատաղ եմ,
Հե՜յ, ջանեջան, հե՜յ, ջանեջան, մատաղ եմ,
Հորըս ծառին բար էլնեմ,
Հե՜յ, ջանեջան, հե՜յ, ջանեջան, բար էլնեմ:

Ասում է.

– Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՜յ, լոշը ա՛ռ, կաթնի մեջ բրդի՛, կե՛ր, ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Ծիտը լոշը տալիս գնում է, հովիվն ուտում և քնում է:

## ՀՈՎՎԻ ԱՆԿՈՂԻՆԸ




Չեչոտ քարը գըլխակալ, գըլխակալ.
– Ուխա՜յ, ուխա՜յ, ի՜նչ կակուղ է:

Մի հին կարպետ ուսերին, ուսերին.
– Ուխա՜յ, ուխա՜յ, ի՜նչ նախշուն է:

Այս է հովվի անկողին, անկողին.
– Ուխա՜յ, ուխա՜յ, ի՜նչ տաքուկ է:

Երբ անձրև է կաթկըթում, կաթկըթում.
– Ուխա՜յ, ուխա՜յ, ի՜նչ լավըն է:

Եվ կարպետը թըխկթըխկում, թըխկթըխկում.
– Ուխա՜յ, ուխա՜յ, ծենն անուշ է:

Հովիվն անուշ քընի մեջ, կարպետում, կարպետում.
– Ուխա՜յ, ուխա՜յ, ի՜նչ փափուկ է:

Քաղցր երազ է տեսնում, տեսնում.
– Ուխա՜յ, ուխա՜յ, ի՜նչ քաղցըր է:

Եվ խընդում է, ծիծաղում, ծիծաղում.
– Ուխա՜յ, ուխա՜յ, սիրուն հովիվ:

Գնում է, ետ գալի, թե՝ քոշս տուր:

Հովիվն ասում է.

– Ներա:

– Չէ,– ասում է,– իմ լոշը տուր,

Ծիտ




Հովիվը ծարահատած մի գառն է տալի: Առնում է թռչում:

Ծիտ



3-րդ մաս

Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն։

,,Կալոսի պոկեն,,

զուռնա կամ շվի

/ Այս մեղեդին հարսին տանելիս են նվագում /





և այլն:

# Փափուռի

/Հարսնավորների պարն է/

խումբը




Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Ջուր է գալի էն սարից,
Նանայ, նանայ, փափուռի,
Կաթում է մարմար քարից,
Նանայ, նանայ, փափուռի:

Նանայ, նանայ, փափուռի,
Նանայ, նանայ, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Արև ելավ էն սարից,
Նանայ, նանայ, փափուռի,
Կաքավ կանչեց էն քարից,
Նանայ, նանայ, փափուռի:

Նանայ, նանայ, փափուռի,
Նանայ, նանայ, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Լուսակը շող ա գցել,
Հարսիկը քող ա գցել:

Բարակ քամին տալիս ա,
Ալ քողը դող ա գցել:

Ծամեր ունես ծիրանի,
Քամին տա թել-թել անի:

Կս ծորն ի վեր ծնեբակ,
Դու նման ես արեգակ:

Արեգակը դուս գալուս,
Մեկտեղ գնանք դարիդուս:

# «Արև, արև»

Երգում է խումբը մինչև «Օխ, արևին»-ը:
«Օխ, արևին խաբեցինք...» երգում է ծիտը:

խումբ



Ա - րև, ա - րև, ա - րի դուս, քեզ բե - րել ենք աչ - քի լույս,
Քո քու - րի - կը՝ Լուս - նի - կան բե - րեց չա - միչ մեկ ա - ման:
Ամ - պը ե - կավ մութ ա - րավ, չա - միչն աչ - քե - րես կո - րավ,
բաց ե - րե - սըդ, ա - րե - գակ, մի բուռ չա - միչ քեզ կը - տանք:

ծիտ



Օխ, ա - րե - վին խա - փե - ցինք, օխ, ա - րե - վին խա - փե - ցինք, օխ ա - րե - վին խա - փե - ցինք,
ամ - պի տա - կից հա - նե - ցինք, ամ - պի տա - կից հա - նե - ցինք:

Ասում է.

- Ի՞նչ եք մոլորվել: Ա՛յ, իմ զառն առեք, մորթեցեք, քեփ արեք: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

## Թագվորի մեր, դուս արի

Խումբը




Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տե՛ս, քե ինչե՞ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե կով կըթող ենք բերե:

Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տե՛ս, քե ինչե՞ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե թաղ ավլող ենք բերե:

Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տե՛ս, քե ինչե՞ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե գլուխ ղըմբող ենք բերե:

/ Երգը չվերջացրած՝ ծիտը ետ է գալիս /

Գնում է, ետ գալի, թե՝ իմ զառը տվեք:

Ասում են.- Մորթել ենք՝ կերել, որտե՞ղից տանք:

Սա կանգնում է, թե՝ չէ, իմ զառը տալիս եք՝ տվեք:

Ծիտը




Ու հարսին առնում է թռչում:



## 4-րդ մաս

Գնում է, գնում, գնում է տեսնում մի աշուղ մի ճամփով գնում է:

դաշնամուրը նվագում է սազի ոճով



Ասում է.- Աշուղ ախպեր, առ էս հարսին պահի քեզ մոտ: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Ծիտը գնում է

/Աշուղը, աչքերը փակ, հարսին գովում է; Աշուղի երգը դեռ չվերջացած՝ հարսը թողնում գնում է/:

դաշնամուրը նվագում է սազի ոճով






★ Յուրաքանչյուր հաջորդ տունը սկսել այստեղից և երգել մինչև վերջ:

գնում է, ետ գալի աշուղի առաջը կտրում, թե՝ իմ հարսը ինձ տուր:
Աշուղը ասում է.- Հարսը գնաց իրենց տուն: Սա թե՝
- Չէ, իմ հարսը տուր,




Աշուղը սազը տալիս է իրեն: Սազն առնում է, ուսը գցում, թռչում, մի տեղ նստում, սկսում է ածել ու ծափտալով երգել.

Դաշնամուրը նվագում է սազի ոճով






Մին էլ հանկարծ սազը վեր ընկավ ջարդվեց, ծիտը թռավ գնաց, հեքիաթն էլ վերջացավ: